

Կ-872-22.02.2021-ՏՀ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«11) ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 10 նիշի մակարդակով, ինչպես նաև հետազոտելիություն իրականացնելու նպատակով ապրանքի քանակական չափման միավորը, 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի համաձայն Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հետազոտելիության ենթակա ապրանքների մասով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 57-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի «բ» կետից հանել «ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետազոտելիությունն ապահովող և հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարք),» բառերը,

2) 3-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 358.1-ին հոդվածը:

Հոդված 4. Օրենսգիրքը լրացնել 358.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«ՀՈՂՎԱԾ 358.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված հետազոտելիության ենթակա ապրանքների նկատմամբ իրականացվում է հետազոտելիություն 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրին (այսուհետ սույն հոդվածում՝ Համաձայնագիր) համապատասխան:

2. Կառավարությունը սահմանում է այն հանգամանքները, որոնք ի հայտ գալու դեպքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքները, որոնք առգրավվել կամ այլ ձեւով դարձել են պետության սեփականությունը եւ (կամ) դատարանի որոշմամբ բռնագրավվել են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված եւ այդ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց կողմից սահմանված ժամկետներում չպահանջված ապրանքները ենթակա են հետազօծելիության:

3. Համաձայնագրին համապատասխան հետազօծելիության մեխանիզմի իրագործման համակարգումն ապահովող, հետազօծելիության ազգային համակարգում ներառվող տեղեկությունների հավաքումը, հաշվառումը, պահպանումն ու մշակումը եւ (կամ) հետազօծելիության մեխանիզմի իրագործումն ապահովող լիազոր մարմինը սահմանում է Կառավարությունը:

4. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում տեղեկատվական համակարգերի անսարքության մասին անձանց տեղեկացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենսգրքի 410-րդ հոդվածից հանել «կամ ապրանքների հետազօծելիության ապահովման» և «կամ առանց ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի» բառերը և 8-րդ մասի վերջին նախադասությունը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազօծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող յոթերորդ ամսվա 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 55-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել 11-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«11) ապրանքի ԱՏԳ ԱԱ ծածկագիրը՝ 10 նիշի մակարդակով, ինչպես նաև հետազոտելիություն իրականացնելու նպատակով ապրանքի քանակական չափման միավորը, 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի համաձայն Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում հետազոտելիության ենթակա ապրանքների մասով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 57-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասի «բ» կետից հանել «ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետազոտելիությունն ապահովող և հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարք),» բառերը,

2) 3-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 358.1-ին հոդվածը:

Հոդված 2.4. Օրենսգրքը լրացնել 358.2-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

«ՈՂՎԱԾ 358.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԵՏԱԳԾԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ հետազոտելիության ենթակա ապրանքների նկատմամբ իրականացվում է հետազոտելիություն 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրին (այսուհետ սույն հոդվածում՝ Համաձայնագիր) համապատասխան:

2. Կառավարությունը սահմանում է այն հանգամանքները, որոնք ի հայտ գալու դեպքում Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված՝ «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով չձեւակերպված ապրանքները, որոնք առգրավվել կամ այլ ձեւով դարձել են պետության սեփականությունը եւ (կամ) դատարանի որոշմամբ բռնագրավվել են մաքսատուրքերի, հարկերի, հատուկ, հակազնագցման, փոխհատուցման տուրքերի վճարման հաշվին, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 51-րդ գլխին համապատասխան՝ մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված եւ այդ ապրանքների նկատմամբ լիազորություններ ունեցող անձանց կողմից սահմանված ժամկետներում չպահանջված ապրանքները ենթակա են հետազօծելիության:

3. Համաձայնագրին համապատասխան հետազօծելիության մեխանիզմի իրագործման համակարգումն ապահովող, հետազօծելիության ազգային համակարգում ներառվող տեղեկությունների հավաքումը, հաշվառումը, պահպանումն ու մշակումը եւ (կամ) հետազօծելիության մեխանիզմի իրագործումն ապահովող լիազոր մարմինը սահմանում է Կառավարությունը:

4. Համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում տեղեկատվական համակարգերի անսարքության մասին անձանց տեղեկացման կարգը սահմանում է Կառավարությունը:»:

[Հոդված 5. Օրենսգրքի 410-րդ հոդվածից հանել «կամ ապրանքների հետազօծելիության ապահովման» և «կամ առանց ապրանքների հետազօծելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի» բառերը և 8-րդ մասի վերջին նախադասությունը:](#)

~~Հոդված 3~~ 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազօծելիության մեխանիզմի մասին» համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող յոթերորդ ամսվա 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-872-22.02.2021-SՀ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն են ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	<p>ՀՀ ԱԺ պատգամավորներ՝</p> <p>Բաբկեն Թունյան</p> <p>Հովիկ Աղազարյան</p> <p>Հայկ Գևորգյան</p> <p>Ծովինար Վարդանյան</p> <p>Գևորգ Պապոյան</p> <p>Հռիփսիմե Գրիգորյան</p> <p>Հայկ Սարգսյան</p> <p>Արտաշես Պետրոսյան</p> <p>Կարեն Համբարձումյան</p>	<p>«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ</p>	<p>Հաշվի առնելով, որ 2019թ. մայիսի 29-ին ստորագրված՝ «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության մեխանիզմի մասին» համաձայնագրով նախատեսվում է կիրառել Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտելիության այլ մեխանիզմ, որն ավելի համապարփակ լուծում է նախատեսում, ուստի անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել օրենսգրքի 358.1-ին հոդվածը և դրա կիրառման հետ կապված օրենսգրքի մյուս հոդվածների դրույթները: Այդ նպատակով առաջարկվում է նախագիծը լրացնել հետևյալ հոդվածներով.</p> <p>Հոդված. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 57-րդ</p>	<p>Առաջարկությունն ընդունվել է. Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p>Ընդունվել է</p>

	<p>Հայկ Ցիրունյան</p>		<p>հոդվածում՝</p> <p>1) 2-րդ մասի «բ» կետից հանել «ինչպես նաև ցանցային կապի միջոցներով ապրանքների հետազոտելիությունն ապահովող և հարկային մարմին տեղեկատվություն հաղորդող էլեկտրոնային սարքերով (այսուհետ՝ ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարք)» բառերը,</p> <p>2) 3-րդ մասի 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:</p> <p>Հոդված. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 358.1-ին հոդվածը:</p> <p>Հոդված. Օրենսգրքի 410-րդ հոդվածից հանել «կամ ապրանքների հետազոտելիության ապահովման» և «կամ առանց ապրանքների հետազոտելիությունն ապահովող էլեկտրոնային սարքի» բառերը և 8-րդ մասի վերջին նախադասությունը:</p>		
--	-----------------------	--	--	--	--